ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման N 3 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2018 թվականի գործունեության ծրագիրը մշակվել է՝ առաջնորդվելով «Մարզային զարգացման ծրագրերի մշակում և իրականացում» 2008-2009թթ. մեթոդական ձեռնարկով: Ծրագրում ներառվել են ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ին կայացած նիստի N 29.7/[431977]-17 N 51 արձանագրությամբ տրված հանձնարարականի ցուցանիշներն ու ուղղությունները:

Ծրագրի նպատակներն են.

1) համախմբել 2018 թվականի ընթացքում մարզում նախատեսվող բոլոր միջոցառումները՝ մարզի ռազմավարական նպատակների իրականացման համար,

2) ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում

3) սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումների իրականացման համար:

2018 թվականի գործունեության ծրագրում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման ընթացքին հետևելու է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը: Ծրագրում ներառված են Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի, համայնքային բյուջեի, մասնավոր ներդրումներով, ինչպես նաև միջազգային և այլ կազմակերպությունների կողմից Գեղարքունիքի մարզում 2018 թվականին նախատեսվող ներդրումային ծրագրերը: Արձանագրվել են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մոնիտորինգի աշխատանքները:

ՄԶՌ 2017-2025թթ. մարզի ռազմավարական նպատակներ են

1. Մրցունակության բարձրացում.

2. Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում.

3. Տարածքային զարգացման կարողությունների զարգացում.

ՄԶՌ 2017-2025թթ. մարզի հիմնական գերակայություններ են

1.Գյուղատնտեսության արդիականացում.

2.Սևանա լճի էկոհամակարգի պահպանում և տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով գյուղական տուրիզմի վրա.

3.Վերականգնվող էներգետիկայի արտադրություն և արդյունավետության բարձրացում:

Ի. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության, գործազրկության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է:

Մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

1.«ԳեոՊրո Մայնինգ» ՍՊԸ-ն իրականացնելու է ներդրումային աշխատանքներ և ներդրվելու է շուրջ 3864000,0 հազար դրամ, որի արդյունքում կստեղծվի 160 նոր աշխատատեղեր:

2018 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է 2մլրդ. 759մլն. 800հազ. դրամի ներդրումային աշխատանքներ և սեղծվել է 61 աշխատատեղ:

2. Գեղհովիտ համայնքում մասնավոր ներդրող Քրիստիան Գելեջիի կողմից իրականացվում է կարի արտադրամասի կառուցում և ներդրվելու է շուրջ 280000,0 հազար դրամ, որի արդյունքում կստեղծվի 250 նոր աշխատատեղեր:

2018 թվականի 1-ին կիսամյակում աշխատանքներ չեն իրականացվել:

3. Էներգետիկայի ոլորտում մասնավորի կողմից ներդրումների ընդհանուր գումարը կազմելու է 4.5 մլրդ. ՀՀ դրամ և պետբյուջեից կներդրվի 833,3 մլն. դրամ ընդհանուր առմամբ մարզում կստեղծվեն՝ կառուցման փուլում շուրջ 75, շահագործման փուլում՝ շուրջ 85 աշխատատեղեր, ընդամենը կստեղծվի 160 աշխատատեղ:

2018 թվականին 1-ին կիսամյակում ներդրումներ չեն կատարվել:

2018թ. մարզի վարչական տարածքում կատարվելիք արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի, էներգետիկայի (մասնավոր), ընդհանուր ներդրումների ծավալը՝ նախատեսվել է 32մլրդ. 818մլն. 700 հազար դրամ, որի արդյուքում կստեղծվի 570 աշխատատեղ:

2018թ. 1-ին կիսամյակում մարզի վարչական տարածքում կատարված արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի, էներգետիկայի (մասնավոր), ընդհանուր ներդրումների ծավալը՝ կազմել է 3 մլրդ. 540մլն. 699հազար դրամ, որի արդյուքում ստեղծվել է 63 աշխատատեղ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացման ուղղությամբ մարզում 2018թ. ևս նախատեսվում է ՓՄՁ ԶԱԿ-ի մի շարք ծրագրերի իրականացում. որը բացված տեսքով ներկայացված է ստորև:

1.ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)

1.1-30 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներ«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրի և այլ տեխնոլոգիական դասընթացներ:

2018 թվականի 1-ին կիսամյակում չեն իրականացվել «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագիրը և այլ տեխնոլոգիական դասընթացները:

2.ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

2.1 Գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում աջակցություն կցուցաբերվի շուրջ 300 ՓՄՁ-ի սուբյեկտի՝ ապահովելով 700-900 անգամ աջակցություն: 2018թ. ընթացքում ձեռնարկատիրությանն առնչվող օրենսդրական դաշտում կատարված փոփոխությունների վերաբերյալ կկազմակերպվեն առնվազն 2 իրազեկում խորհրդատվություններ:

2018 թվականի 1-ին կիսամյակում ցուցաբերվել է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն շուրջ 180 ՓՄՁ սուբյեկտի ապահովելով 480 աջակցություն:

2.2 2018 թվականի ընթացքում ձեռնարկատիրությանն առնչվող օրենսդրական դաշտում

կատարված փոփոխությունների վերաբերյալ կկազմակերպվեն առնվազն 2 իրազեկում խորհրդատվություններ:
Կազմակերպվել է իրազեկում-խորհրդատվություններ կապված Հարկային օրենքների փոփոխության հետ: Քննարկմանը մասնակցել են 33 ՓՄՁ-ներ և հաշվապահներ:

3.ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտի:

3.1 2018 թվականի ընթացքում ֆինանսական աջակցություն կցուցաբերվի 2-5 գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտի:
2018 թվականի 1-ին կիսամյակում կատարվել է ֆինանսական աջակցություն 4 նոր ՓՄՁ սուբյեկտի: Ընդհանուր գումարը կազմում է 13մլն.դրամ:

4.ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

4.1 2018 թվականի ընթացքում աջակցություն կցուցաբերվի շուրջ 10 ՓՄՁ սուբյեկտի միջազգայնացման ուղղությամբ:
Այցելություններ և հարցազրույցներ ենք ունեցել մարզում գործող թվով 5 կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են խոտաբույսերով թեյերի, պահածոյացված միրգ, բանջարեղենի, արտադրությամբ և արտահանմամբ: Արդյունքում հավանության արժանացած կազմակերպության գործունեությունը կգնահատվի միջազգային կազմակերպությունների կողմից և հնարավորություն կստեղծվի արտադրանքը արտահանելու միջազգային շուկա:

5. Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսներին աջակցություն

5.1 2018 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզում փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացման համար պլանավորված է շուրջ 10033.0 մլն.դրամ: Այդ թվում 2018 թվականի ընթացքում 2-5 ՓՄՁ սուբյեկտի նախատեսվում է տրամադրել մինչև 30.0 մլն ՀՀ դրամի վարկային երաշխավորություններ:
2018 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ Գեղարքունիքի մարզում փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացման ուղղությամբ ծրագրեր չեն իրականացվել:

III.ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

3.1 Զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանը ուղղված միջոցառումներ

ՀՀ Գեղարքունիքի մարզում կան բոլոր հնարավորությունները մշակութային, ձմեռային, գյուղական, ագրո և էկո տուրիզմի խթանման համար: Զբոսաշրջությունը որպեսզի դառնա մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժ, անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները:

ա) Համայնքների զարգացում – Զբոսաշրջիկների համար համայնքի բնակիչները կազմակերպելու են միջոցառումներ կամ ավանդական տոներ, հյուրասիրություններ, որոնք նպաստելու են համայնքի սոցիալական ակտիվությանը, իսկ զբոսաշրջության որոլտում ստեղծվելու են աշխատատեղեր: Ստացվող եկամուտները կխթանեն տեղի բնակչությանը գյուղական համայնքները չլքելուն:

բ) Ենթակառուցվածքներ – Անհրաժեշտ է բարելավել ճանապարհային և հաղորդակման ենթակառուցվածքները, առողջապահության և տրասպորտային ոլորտները, ստեղծել նոր սպորտային և հանգստի համար զանազան համալիրներ, սպասարկման, զվարճանքի և հասարակության համար նախատեսված այլ վայրեր:

գ)Սեզոնայնություն – Մարզում զբոսաշրջությունը բնութագրվում է խիստ արտահայտված սեզոնայնությամբ: Զբոսաշրջիկների գերակշռող մեծամասնությունը, մասնավորապես հանգստի նպատակով մարզ են այցելում Սևանա լիճ հունիս-սեպտեմբեր ամիսներին, իսկ տարվա մնացած հատվածում զբոսաշրջիկների թիվը խիստ պակասում է: Անհրաժեշտ է մարզում տարվա բոլոր եղանակներին զբոսաշրջությունը զարգացնել՝ ներդնելով այլընտրանքային զբոսաշրջություն, ձմեռային սպորտաձևեր, որսորդություն, ձկնորսություն, նավագնացություն, առագաստանավային սպորտ (այս ուղղությունը վերջին

ժամանակահատվածում զարգացում է ապրել), ալպինիզմ, որոնց համար կան բոլոր նպաստավոր պայմանները:

3.2 ՀՀ Գեղարքունիք մարզում 2018թ. զբոսաշրջության ոլորտում նախատեսված ներդրումային ծրագրեր

ա) 2017թ-ի մայիսին Սևան համայնքը անդամակցել է ԵՄ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրին, մասնակցել ծրագրի պիլոտային նախագծեր դրամաշնորհային մրցույթին և ճանաչվել հաղթող, որի արդյունքում 2018-2019թթ. համայնքում կիրականացվի «Նորարարության խթանման կայուն հարթակ» ծրագիրը: Բյուջեն 538.577 եվրո /ԵՄ ֆինանսավորում՝ 89.12%, համայնքային ներդրում՝ 10.88% /: Ծրագրի արդյունքում նախատեսված է բիզնես կենտրոնի ստեղծում, որը նպաստելու է գործարար միջավայրի բարելավմանը, զբոսաշրջային հոսքերի ավելացմանը, ներդրումների ներգրավմանը և աշխատատեղերի ստեղծմանը:

2018 թվականի 1-ին կիսամյակում Սևան համայնքի անդամակցության ԵՄ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում գործարարների հետ , որի արդյունքում ծրագրի միջոցներով՝ բուկլետների տեսքով, գովազդել ենք տեղի մասնավոր հատվածին: Ընտրվել են լավագույն և ժամանակակից 15-ից-20 գործող բիզնեսներ, հավաքագրվել է հակիրճ տեղեկատվություն՝ ծառայության, արտադրության վերաբերյալ և համապատասխան նկարներ, որոնք տպվելու են և բուկլետների տեսքով բաժանվելու են տուրիստական ընկերություններին, տուր կազմակերպող գործակալություններին և այլն՝ գովազդելու նպատակով :

- Հունիսի սկզբին համայնքապետարանը հայտարարել է շինարարական մրցույթ , աշխատանքները ընթացքի մեջ են:

բ) Շողակաթ համայնքում իրականացվելու է «Ծովափնյա զբոսաշրջության զարգացում» ծրագիրը, որի արժեքը կազմում է 120.0 մլն. դրամ:

«Ծովափնյա զբոսաշրջության զարգացում» ծրագիրը նախատեսվել էր իրականացվել 2018 թվականի ընթացքում, սակայն չեն կարողացել ձեռք բերել ֆինանսական միջոցներ, որի պատճառով դադարեցվել է ծրագրի իրականացումը:

գ) Մարտունի բնակավայրում իրականացվելու է գիշերակացի կառուցում, մեղվաբուժության կազմակերպում, որի արժեքը կազմում է 3.0 մլն. Դրամ:

1-ին կիսամյակում <<Մարտունի բնակավայրում իրականացվելու է գիշերակացի կառուցում, մեղվաբուժության կազմակերպում>> ծրագրի շրջանակներում ներդրվել է 2մլն.500հազ.դրամ և ստեղծվել է 5 աշխատատեղ:

դ) 2018 Ճամբարակի խոշորացված համայնքներում (Գետիկի հովիտ) ԵՄ-ի կողմից կիրականացվի զբոսաշրջության զարգացմանն ուղղված 20 բիզնես ծրագրեր: Ծրագրի արժեքը կազմում է 127.6 մլն. դրամ: Կխթանի զբոսաշրջության զարգացմանը, որի արդյուքում կստեղծվի 25 աշխատատեղ:

1-ին կիսամյակում «ԵՄ զբոսաշրջության համար. Համայնքահեն գյուղական զբոսաշրջություն և մշակութային միջոցառումներ Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում» իրականացվող ծրագրի շրջանակներում ընթացիկ ծախսերը կազմում են 7մլն. 260հազ. դրամ և ստեղծվել են 2 աշխատատեղ:

Ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից և տևելու է երկու տարի: Ծրագրի հիմնական նպատակն է զբոսաշրջության և մշակույթի խթանումն է Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում՝ ընդլայնելով տնտեսական զարգացումը և նվազեցնելով աղքատությունը թիրախ մարզերում;

Ծրագրի շրջանակներում տարվում են աշխատանքներ ստեղծելու ընդհանուր թվով 6 տուրիստական պրոդուկտներ, որոնք հնարավորություն կտան ավելի մեծ քանակի զբոսաշրջիկների հոսք ապահովել դեպի Ճամբարակի տարածաշրջան: Արդեն իսկ սկսվել է 43 կմ երկարությամբ քայլուղու ստեղծումը և մինչև նոյեմբերի վերջ կավարտվի: Մնացած 5 պրոդուկտները ևս կավարտվեն 2018-ի ավարտին: Ծրագրի շրջանակներում ստեղծվել է համայնքայեն բիզնեսի աջակցության կառույց, որի անդամների մասնագիտական շարունակական զարգացումը ևս ծրագրի հիմնական նպատակներից է;

Այս տարի պլանավորվում է կազմակերպել բնապահպանական շրջիկ փառատոն, ինչպես նաև սերտորեն համագործակցել տուրիստական գործակալությունների հետ, որպեսզի Ճամբարակի տարածաշրջանը ավելի շատ ընդգրկվի տուրիստական փաթեթներում:

ե) Սևան համայնքի վարչական տարածքում «Բոհեմա Ռեզորթ» զվարճանքի և հանգստի կենտրոնի կառուցում: Ծրագրի արժեքը կազմում է 1217.5 մլն. դրամ: Կխթանի զբոսաշրջության զարգացմանը, որի արդյուքում կստեղծվի 25 աշխատատեղ:
1-ին կիսամյակում ձեռք է բերվել 2000 քառ.մետր հողատարածք և ընթացքի մեջ է 1200 քառ.մետր հողատարածքի ձեռք է բերման աշխատանքները: Ընթացքի մեջ է նաև «Բոհեմա Ռեզորթ» զվարճանքի և հանգստի կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները: 1-ին կիսամյակում ներդրվել է 40 մլն.դրամ և ստեղծվել է 40 նոր աշխատատեղ, որից 25-ը հիմնական 15-ը սեզոնային:
զ) Նորաշեն համայնքի վարչական տարածքում «Ծովասար 2» զվարճանքի և հանգստի կենտրոնի կառուցում: Ծրագրի արժեքը կազմում է 1461.0 մլն. դրամ: Կխթանի զբոսաշրջության զարգացմանը, որի արդյուքում կստեղծվի 30 աշխատատեղ:
1-ին կիսամյակում Նորաշեն համայնքի վարչական տարածքում «Ծովասար 2» զվարճանքի և հանգստի կենտրոնի կառուցման ծրագրի համար նախատեսված ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով ծրագրի իրականացման աշխատանքները դադարեցվել են:
է) Չկալովկա համայնքում գործող «Ծովածոց» ՍՊԸ-ն իրականացնելու է զբոսաշրջության զարգացման ծրագիր, որի արժեքը կազմում է 20.0 մլն. դրամ: Այն խթանելու է զբոսաշրջության զարգացմանը, որի արդյուքում կստեղծվի 5 աշխատատեղ:
1-ին կիսամյակում «Ծովածոց» ՍՊԸ-ն զբոսաշրջության զարգացման ծրագրի շրջանակներում իրականացրել է 9մլն.600հազ.դրամի ներդրումային աշխատանքներ՝ գնվել են 4 զբոսաշրջային նավակներ և ստեղծվել են 12 հիմնական աշխատատեղեր:
ը) «Նոյ Լենդի» զբոսաշրջության զարգացում Ծրագրի արժեքը կազմում է 60.0 մլն. դրամ: Կխթանի զբոսաշրջության զարգացմանը, որի արդյուքում կստեղծվի 65 աշխատատեղ:
1-ին կիսամյակում իրականացվել է 60.0 մլն. դրամի ներդրումային աշխատանքներ՝ կառուցվել է խոհանոց, վերանորոգվել են տնակները, բարեկարգվել է տարածքը, կատարվել են ծառատնկում: Ստեղծվել է հիմնական 25 աշխատատեղ:

2018թ. Մարզում զբոսաշրջությաան ոլորտում ընդամենը ներդրվելու է 3մլրդ. 024մլն. 100 հազ. դրամ, որից մասնավորը՝ 2մլրդ. 891մլն. 500հազ. դրամ, իսկ միջազգային դոնորի կողմից 132մլն. 600հազ. դրամ: Ընդամենը աշխատատեղ՝ 117:

2018 թվականի 1-ին կիսամյակում մարզում զբոսաշրջության ոլորտում ներդրվել է 120մլն. 201հազ. 500 դրամ, որից մասնավորը՝ է 112մլն. 100հազ. դրամ, իսկ միջազգային դոնորի կողմից 8մլն. 101հազ. 500 դրամ: Ընդամենը ստեղծվալ է 69 հիմնական աշխատատեղ :

IV.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզում գյուղատնտեսության ոլորտի գերակայություններ են սահմանվել գյուղատնտեսության տեխնիկական արդիականացումը, նորարարությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և խթանումը, իսկ առաջնահերթ գերակայություն է սահմանվել՝ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը:

Ոլորտի թույլ կողմերն են՝ ավանդական գյուղատնտեսության դոմինանտ լինելը, գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությունը, մեքենայացման, արտադրողականության ցածր մակարդակը, ոռոգման համակարգերի մաշվածության հետևանքով ոռոգման ջրի կորուստները, մթերման ծավալների ցածր մակարդակը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության ոլորտում կատարված ներդրումային աշխատանքների մոնիտորինգի ցուցանիշներ

	Անվանումը	Չափման միավոր	Ցուցանիշի դինամիկան

	Գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշներ

			2018թ.պլանավորված	2018թ.1-ին կիսամյակ
1	Գյուղատնտեսության մեջ նոր կամ շարունակական ներդրումներ	Մլն.դրամ	2041.1	893.6
2	Գյուղատնտեսական նոր աշխատատեղեր	Մարդ	76	19
3	Ժամանակակից տեխնոլոգիայով ինտենսիվ այգիների տարածքը	Հա	0	0
4	Հակակարկտային ցանցերով ցանցապատված այգիների տարածքը	Հա	0	0
5	Մարզում սպանդանոցային կառույցներ թիվը	Հատ	4	3
6	Սպանդանոցների հզորությունը	Տոննա/տարի	5000	1200
7	Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրված տեխնիկայի թիվը	Հատ	18	20
8	Տոհմային անասնաբուծական տնտեսությունների քանակ	Հատ	0	0
9	Տոհմային տնտեսություններում անասնագլխաքանակը	հատ	0	0
10	Սառնարանային տնտեսությունների քանակ	Հատ	4	3
11	Սառնարանային տնտեսությունների հզորություն	տոննա	44	24
12	Գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգելի մակերես	Հա	14507	14507
13	Փոքր տնտեսությունների թիվը (1-5 հա պտղատու այգի կամ խաղող, կամ 5-10 հա վարելահող, կամ 0.1-0.5 հա ջերմոց, կամ 20-30 գլուխ խ. եղջ. գյուղ. կենդանի, կամ 50-100 գլուխ մանր եղ. գյուղ. կենդանի)	Հատ	845	845
14	Միջին տնտեսությունների թիվը (5-10 հա պտղատու այգի կամ խաղող, կամ 10-20 հա վարելահող, կամ 0.5-2.0 հա ջերմոց, կամ 30-60 գլուխ խ. եղջ. գյուղ. կենդանի, կամ 100-150 գլուխ մանր եղ. գյուղ. կենդանի)	Հատ	343	343
15	Խոշոր տնտեսությունների թիվը (10-ից ավելի հա պտղատու այգի կամ	հատ	256	256

	խաղող, կամ 20-ից ավելի հա վարելահող, կամ 2-ից ավելի հա ջերմոց, կամ 60-ից ավելի գլուխ խ. եղջ. գյուղ. կենդանի, 150-ից ավելի գլուխ մանր եղ. գյուղ. կենդանի)			

1. Մարզում գյուղատնտեսական կլաստերների տարանջատում և դրանց հիման վրա ժամանակակից տեխնոլոգիայով ինտենսիվ այգիների հիմնման, գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման, գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրերի շահառուների թվերի ներկայացում.

1.1 2018 թվականի առաջին կիսամյակում մարզի Շողակաթ համայնքում 40 հեկտար տարածքի վրա հիմնվում է ժամանակակից տեխնոլոգիայով կաթիլային այգի, կատարվել է 25 մլն.դրամի ներդրում,ստեղծվել է 5 աշխատատեղ:

1.2. 2018թ. Առաջին կիսամյակում, գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում 12 շահառու ձեռք են բերել 20 միավոր գյուղ. տեխնիկա, որից 12 տրակտոր և 8 գյուղգործիքներ, ստեղծվել է 12 աշխատատեղ:

2. Մարզում սպանդանոցային կառույցների թիվը և այդ ուղղությամբ իրականացված ծրագրերը.

2.1 2018թ. դրությամբ մարզում առկա են՝ ք. Գավառ-2, Վահան-1 պատրաստի բայց չգործող սպանդանոցներ:

2018թ. առաջին կիսամյակում Մարտունի քաղաքում կառուցվում է 20 տոննա տարողությամբ 1 սպանդանոց ներդնելվել է շուրջ 7 մլն. դրամ :

3. Տոհմային անասնաբուծական տնտեսությունների ստեղծման ծրագրերի իրականացում.

2007-2015թթ. ընթացքում տավարաբուծության զարգացման ծրագրով մարզի գյուղացիական տնտեսությունների տրամադրվել է 174 գլուխ տոհմային հղի երինջներ: 2019-2023թթ. անասնաբուծության ծրագրով մարզի առանձին տնտեսություններում նախատեսվում է ստեղծել մսային ուղղության, <<Սուֆֆոլկ>> և <<Կորիդել>> տիպի ոչխարաբուծական տոհմային կորիզներ:

2018 թվականի առաջին կասամյակում տոհմաբուծության աշխատանքներ չեն իրականացվել:

4.Սառնարանային տնտեսությունների ստեղծման ծրագրերի իրականացում.

4.1 Խաչաղբյուր համայնքում գործում է մեկ սառնարանային տնտեսություն 5 տոննա տարողությամբ, Ճամբարակ համայնքում /Վահան/ գործում է 2 սառնարանային տնտեսություն 25 և 5 տոննա տարողությամբ: 2018 թվականի առաջին կիսամյակում սառնարանային տնտեսությունների կառուցման աշխատանքներ չեն իրականացվել:

5. Գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգելի մակերեսի աճ՝ 130 հա –ով՝ /14377 հա հասցնելով 14507հա-ի/:

2018թ. Առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգելի մակերեսը ավելացել է 130 հա-ով:

2018թ. Առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեով հատկացվել է շուրջ 115 մլն. դրամ՝ մարզի համայնքներում գյուղ. կենդանիների հիվանդությունների դեմ պատվաստում, բարձրորակ սերմերի ներկրման, հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի և դիզ. վառելիքի ձեռքբերման և կրծողների դեմ պայքարի աշխատանքներիիրականացման համար:

Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի միջոցով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ, Ծովինար, Նորատուս/Արծվաքար/ համայնքներում

ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավման համար 2018թ. առաջին կիսամյակում ներդրվել է 649 մլն դրամ:

6. Առաջին կիսամյակում մարզի 18 համայնքներում արոտավայրերի ջրարբիացման ծրագրով իրականացնել շուրջ 87 մլն դրամի ներդրումներ:

Մասնավոր ներդրումները 2018թ. Առաջին կիսամյակում կազմել են 32 .մլն դրամ, իսկ համայնքային ներդրումները՝ 10.1 մլն.դրամ:

Մարզում գյուղացիական տնտեսությունների թիվը 53689-ն է, որից՝
փոքր գյուղացիական տնտեսություններ - 845
միջին գյուղացիական տնտեսություններ - 343
խոշոր գյուղացիական տնտեսություններ - 256
2018թ. Առաջին կիսամյակի գյուղատնտեսության ոլորտի ընդամենը բյուջեն/ներդրումները կազմում է 893.6 մլն դրամ,այդ թվում `պետական բյուջե - 115.6 մլն. դրամ,
դոնոր/վարկային կազմակերպություններ - 736.0 մլն.դրամ,
մասնավոր ներդրումներ - 42.1 մլն. դրամ:
Ստեղծվել է 19 աշխատատեղ:

V. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի բնապահպանության ոլորտում գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումները և մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով իրականացվելիք աշխատանքներ հետևյալ ոլորտներում՝

Ջրածածկ տարածքների մաքրում.117062.0 հազար դրամ, իրականացվելու է երկրորդ կիսամյակի ընթացքում:

Ձկնային պաշարների համալրում. 10000.0 հազար դրամ, բաց է թողնվել 60000հատ 0.64 գրամ քաշով մանրաձուկ մոտ 3600.0 հազ. դրամի:

Ձկնային պաշարների հաշվառում. 7526.0 հազար դրամ, իրականացվելու է երկրորդ կիսամյակի ընթացքում:

Անտառվերականգնման աշխատանքներ. 9560.0 հազար դրամ,տնկվել է շուրջ 20.95 հա տնկի:

Սևանի իշխանի պաշարների վերականգնում և ձկնաբուծության զարգացում 280124.0 հազար դրամ, 1-ին կիսամյակում կատարվել է շուրջ 71689.0հազ. դրամի ներդրում:

ՀՀ Գեղարքունիքի մարզում 2018 թվականին բնապահպանության բնագավառում նախատեսվում է ՀՀ պետական բյուջեի սեփական միջոցներից հատկացնել 424.272 մլն.ՀՀ դրամ:

2018թվականի 1-ին կիսամյակում բնապահպանության բնագավառում իրականացվել է ՀՀ պետական բյուջեի սեփական միջոցներից 82.809 մլն.ՀՀ դրամ:

VI.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

6.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

126 դպրոցներից 8-ը ավագ են (ԿԳՆ ենթակայության), 118-ը մարզային ենթակայության, որից 1-ը հատուկ:Մարզային ենթակայության 117 դպրոցներից 89-ը միջնակարգ են, 26-ը՝ հիմնական, իսկ 2-ը տարրական:

ՀՀ Գեղարքունիքի մարզի 126 դպրոցներում սովորում են՝ 28288 աշակերտ, որոնցից 26830-ը մարզային ենթակայության, 1458-ը (ավագ), ԿԳՆ ենթակայության դպրոցներում, իսկ 40-ը Գավառի N 1 հատուկ դպրոցում:

Մարզում 2018 թվականի 1-ին կիսամյակի դրությամբ աշխատել են 3153 ուսուցիչ, որոնցից 2921-ը մարզային ենթակայության դպրոցներում, 205-ը ավագ ԿԳՆ ենթակայության դպրոցներում, իսկ 27-ը Գավառի N 1 հատուկ դպրոցում:

1.2018 թվականի Կրթության մատչելիության ապահովման նպատակով. իրագործելու ենք՝

1.1 Նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման համար, հանրակրթական դպրոցների բազայի հիման վրա, նախակրթարանների ցանցի և աշխարհագրության ընդլայնում:2018 թվականին մարզում նախատեսվում է նախակրթարանների ցանցը ավելացնել ևս 6-ով:

2018 թվականի 1–ին կիսամյակում մարզում նախակրթարանների ցանցը ավելացել է 6-ով՝Գեղարքունիքի, Վաղաշենի, Վարսերի, Ակունքի, Հայրավանքի միջնակարգ և Մարտունու N 1 հիմնական դպրոցներում:

1.2Դպրոցահասակ երեխայի կրթության իրավունքի իրացումը ապահովելու նպատակով երեխայի կրթության կարիքի գնահատման գործընթացի կատարելագործում՝ մասնավորապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վաղ հայտնաբերման, հաշվառման, ինչպես նաև համապատասխան շենքային պայմանների /հատկապես՝ թեքահարթակների/ գույքագրման, հարմարեցման, ներառական կրթական ծրագրով աշխատելու համար հատուկ և համապատասխան մանկավարժների հաշվառման ու ապահովման միջոցով: 2018 թվականին մարզում նախատեսվում է ևս 3 դպրոցներում թեքահարթակների կառուցում:

2018 թվականի 1–ին կիսամյակում Զոլաքարի N 2, Ն.Գետաշենի N 1 միջնակարգ և Սևանի N 1 հիմնական դպրոցներում կառուցվել են թեքահարթակներ:

2. Մրցունակ և ստեղծագործ մարդկային ռեսուրս ունենալու համար կրթության որակի և արդյունավետության բարձրացում

2.1 Մարզային ինչպես նաև համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների վարչական աշխատողների ու կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների ղեկավարման կարողությունների և հմտությունների զարգացման ապահովում՝ մեր կողմից անվճար անցկացվող վերապատրաստումների միջոցով՝ իրականացնելով 118 դպրոցների խորհուրդների 944 անդամների վերապատրաստումներ:

2018 թվականի 1–ին կիսամյակում մեր կողմից անվճար վերապատրաստվել են մարզի 62 դպրոցների խորհուրդների 496 անդամներ:

2.2 Համապատասխան կազմակերպություններում աշխատանքային պայմանների վիճակի և աշխտանքների կազմակերպման ու առարկայական ծրագրերի, 6-12-րդ դասարաններում անցկացվող տեսադասերի քանակի աճի ապահովում ու դասավանդման դրվածքի նպատակային ուսումնասիրման գործընթացի ակտիվացում՝ առաջավոր փորձի տարածման և լավագույներին խրախուսման միջոցով՝ տեսադասերի քանակը հասցնելով 2800-ի:

2018 թվականի 1–ին կիսամյակի դրությամբ մարզի 114 դպրոցների 6-12-րդ դասարաններում անցկացվել է 4787 տեսադասեր:

2.3 հանրության առջև մարզային, ինչպես նաև համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների ու դրանց գործադիր մարմինների հաշվետվողականության ապահովում, ինչպես իրենց կայքէջերով այնպես էլ լիազորված կամ հիմնադիր մարմինների կայքէջերով ու զանգվածային լրատվամիջոցներով:

2018 թվականի 1–ին կիսամյակի դրությամբ մարզի բոլոր հանրակրթական դպրոցների, ինչպես նաև համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների ու դրանց գործադիր մարմինների կայք էջերում տեղադրվել են նշված կազմակերպությունների ֆինանսական և ընթացիկ գործունեության վերաբերյալ հաշվետվություններ: ինչպես նաև համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների ու դրանց գործադիր մարմինների

2.4 պետական միջոցների արդյունավետ օգտագործման և խնայողության ապահովման արդյունքում համապատասխան կազմակերպությունների շենքային պայմանների բարելավման, ուսումնանյութական բազայի և ժամանակակից տեխնիկական միջոցներով համալրման գործընթացի ակտիվացում:

2018 թվականի 1–ին կիսամյակի դրությամբ մարզի 9 դպրոցներում խնայողության ապահովման արդյունքում բարելավվել են ուսումնանյութական բազան և ժամանակակից տեխնիկական միջոցները:

2018 թվականին առաջարկվում է շարունակել դպրոցների վերանորոգման, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման և ատեստավորման ծրագրերը:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով կշարունակվեն ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները. 2018թ. շուրջ 620 ուսուցիչ կանցնի ատեստավորմանը նախորդող վերապատրաստում:

2018 թվականի 1–ին կիսամյակի դրությամբ 370 ուսուցիչներ անցել են ատեստավորմանը նախորդող վերապատրաստում:

2018 թվականի կրթության ոլորտի բյուջեն կազմում է 6488502.8 հազար դրամ, ներառյալ դպրոցների պահպանման ծախսերը,այդ թվում՝

- ✓ Հանրակրթական ուսուցում՝ 6142436.4հազար դրամ
- ✓ Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցականներին տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 1142.9 հազար դրամ
- ✓ Հատուկ կրթություն՝ 83761.2 հազար դրամ
- ✓ Արտադպրոցական դաստիարակություն՝ 13841.5 հազար դրամ
- ✓ Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում՝ 39673.7 հազար դրամ
- ✓ Ներառական կրթություն՝ 67589.1 հազար դրամ
- ✓ Սոց. Անապահով ընտանիքի դասագրքերի վարձավճարների փոխհատուցում՝ 43.8 հազար դրամ
- ✓ Նախադպրոցական կրթություն՝ 131144.2 հազար դրամ
- ✓ Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարի տրամադրում՝ 8,870.0 հազար դրամ

2018 թվականի 1-ին կիսամյակում կրթության ոլորտի փաստացի կատարողականը կազմել է 2746157.5 հազար դրամ, ներառյալ դպրոցների պահպանման ծախսերը,այդ թվում՝

- ✓ Հանրակրթական ուսուցում՝ 2600051.5հազար դրամ
- ✓ Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցականներին տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 484.6 հազար դրամ
- ✓ Հատուկ կրթություն՝ 35598.5 հազար դրամ
- ✓ Արտադպրոցական դաստիարակություն՝ 6270.2 հազար դրամ
- ✓ Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում՝ 16543.9 հազար դրամ
- ✓ Ներառական կրթություն՝ 29130.9 հազար դրամ
- ✓ Սոց. Անապահով ընտանիքի դասագրքերի վարձավճարների փոխհատուցում՝ 0
- ✓ Նախադպրոցական կրթություն՝ 54382.1 հազար դրամ
- ✓ Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարի տրամադրում՝ 3695.8հազար դրամ

2018 թվականի ՀՀ պետական բյուջեի համաձայն՝ մարզի կրթական հաստատությունում իրականացվելու են 239395.3 հազար դրամի հիմնանորոգման աշխատանքներ /Սևանի N 1 հ/դ, Զոլաքարի N 2 և Ն. Գետաշենի N 1 մ/դ/:

2018 թվականի 1–ին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի համաձայն հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Զոլաքարի N 2, Ն.Գետաշենի N 1 միջնակարգ և Սևանի N 1 հիմնական դպրոցներում, որոնք դեռևս ընթացքի մեջ են :

2017-2018 ուսումնական տարում մարզի 113 դպրոցներում շարունակվելու է պարենի համաշխարհային <<Դպրոցական սնունդ>> ծրագրով շուրջ 12000 աշակերտներին սննդի տրամադրում:

2018 թվականի 1–ին կիսամյակում մարզի 113 դպրոցներում իրականացվել է պարենի համաշխարհային <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը՝ շուրջ 12000 աշակերտների համար:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի կողմից ներդրումային ոլորտում կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչներ

Հ/Հ	Չափորոշիչի անվանումը	Չափման միավոր	Ցուցանիշի դինամիկան	
1.	Դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը	թիվը	9	9.2
	Միջազգային/հանրապետական օլիմպիադաների մրցանակակիրներ	թիվը	25	22
	Ուսումը միջազգային կամ ՀՀ ռեյտինգային ԲՈՒՀ-երում շարունակողներ	թիվը	380	200

Ծանոթություն-*

2018 թվականի 1-ին կիսամյակում աշակերտ ուսուցիչ հարաբերակցությունը ստացվել է մարզային ենթակայության 26830 աշակերտի հարաբերակցությունը 2921 ուսուցչի:

6.2 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում իրականացվող ծրագրերը ուղղված են հոգևոր և ազգային ավանդույթների վրա խարսխված մշակութային միջավայրի ձևավորմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը, անհատի ստեղծագործական և ֆիզիկական կարողությունների խթանմանը, ազգային ինքնության և քաղաքացիական ու հայրենասիրական բարձր գիտակցությամբ օժտված հասարակության ձևավորմանը: Այդ նպատակով՝

1) 2018թ. առաջին կիսամյակում իրագործվել են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, կազմակերպվել են մարզին բնորոշ ավանդական տոներ, ծեսեր: Մայիսի 28-ին Գավառ քաղաքում անցկացվ է բացօթյա տոնական համերգ և հրավառություն՝ նվիրված Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին, իսկ մարզի մյուս համայնքներում՝ տարաբնույթ միջոցառումներ: Կազմակերպվել են հայկական մշակույթի և արվեստի, հասարակական-քաղաքական գործիչներին և մշակութային նշանավոր իրադարձություններին, հոբելյաններին նվիրված միջոցառումներ: Անցկացվել են 300-ից ավելի միջոցառումներ, որոնց շահառուների թիվը գերազանցել ՝ 18 հազարը:

2) Աջակցություն է ցուցաբերվել մարզում կազմակերպվող թատերահամերգային կազմակերպությունների հյուրախաղերին: ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվող «Մշակութային կանգառ» ծրագի շրջանակներում Հայաստանի պարի պետական անսամբլը համերգով հանդես է եկել Մարտունի քաղաքում: Անցկացվել են մարզային մշակույթի օրեր, փառատոներ, մրցույթներ, ցուցահանդեսներ, այդ թվում՝ «Հայրենի եզերք» բարբառների և ժողովրդական երգի մարզային փառատոներ: Նշված միջոցառումներից 1-ը անցկացվել է պետական սուբսիդավորմամբ, որի նպատակով պետական բյուջեից հատկացվել է 530 հազ. դրամ՝ միջոցառումների մասնակիցների թիվը կազմել է 3.0 հազարը:

1) Շարունակվել են մարզի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների հանրահռչակմանն ուղղված աշխատանքները՝ տպագրվել են հուշարձանների մասին պատմող հոդվածներ, կպատրաստվել են հեռուստաակնարկներ, անցկացվ են 50-ից ավել էքսկուրսիաներ, ուխտագնացություններ, որին մասնակցել են նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներ, ուսանողներ, մարզում գործող երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2) Սպորտի մասսայականացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում անցկացվել են մասսայական հանրապետական մրցումների և փառատոնների տարածքային և մարզային փուլեր, տարբեր մարզաձևերից (վոլեյբոլ, բռնցքամարտ, շախմատ, ֆուտբոլ և այլն) կազմակերպվել են 7 մարզային առաջնություններ՝ ներգրավելով հաշմանդամություն ունեցող մարզիկներին: Դպրոցականների 1-3-րդ և 4-7-րդ դասարանցիների շրջանում անցկացված սպորտլանդիայի մրցումներին մասնակցել են 15881 պատանիներ ու աղջիկներ, իսկ նախադպրոցական հիմնարկների միջև անցկացված սպորտլանդիային՝ 2032 երեխաներ: Ձմեռային մարզաձևերը և ազգային խաղերը մասսայականացնելու նպատակով մարզի 41 համայնքում անցկացվել են «Գեղարքունյաց ձմեռ-2018» մարզամշակութային մասսայական միջոցառումը, որին մասնակցել են 12 հազար պատանիներ ու աղջիկներ, իսկ մրցումների հաղթողներին պարգևատրելու համար համայնքային բյուջեներից ծախսվել է շուրջ 800հազ. դրամ:

3) Բակային սպորտի զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացման համար անցկացվել են միջբակային մրցումներ, ներհամայնքային առաջնություններ: Կառուցվել է 1 մարզական խաղահրապարակ՝ Գեղամավան համայքում:

6) Մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման, առողջ ապրելակերպի տարածման ու հանրահռչակման, պատմամշակութային ժառանգության պահպանման, երիտասարդների քաղաքական, տնտեսական և մշակութային ու սպորտային կյանքին մասնակցության աստիճանը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են միջհամայնքային մարզամշակութային տարաբնույթ միջոցառումներ, քննարկումներ, արշավներ և այլն:

2018թ. 1-ին կիսամյակի ընթացքում պետական սուբսիդավորմամբ կազմակերպվել է 1 միջոցառում, որի նպատակով ծախսվել է՝ 530 հազ. դրամ, իսկ 2018թ. Գավառ քաղաքում կազմակերպված բացօթյա համերգի կազմակերպման համար՝ 1480 հազ. դրամ:

Ցուցահանդեսների թիվ՝ 21,

Այցելուների քանակ 2018թ. 1-ին կիսամյակի ընթացքում կազմել է՝ 2200,

Թատերական ներկայացումների քանակ՝ 2,

2018թվականի ընդհանուր բյուջեն նախատեսված էր 69772,5 հազ. դրամ, որից 1-ին կիսամյակում ծախսվել է 28895,2 հազ.դրամ, այդ թվում 27095,2 հազ. դրամը պետբյուջեից:

6.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ոլորտային գերակա նպատակ:

Մարզում արտացոլված առողջապահության ոլորտի գերակայությունները ներառում են՝ հեռավոր գյուղական համայնքներում առողջության պահպանման առաջնային ծառայությունների բարելավում և մատչելիության բարձրացում, նեղ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի վերապատրաստում, պոլիկլինիկական կազմի բժիշկների միջոցով հեռավոր գյուղերում բաց դռների օրերի կազմակերպում, հղի կանանց համար նախածննդյան խնամքի դաընթացների կազմակերպում, իմունոկանխարգելման գործի պրոպագանդում, ՁԼՄՆ-երի միջոցով տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ ախտորոշման և լիարժեք բուժման ազգային ռազմավարության մասին հանրային իրազեկության բարձրացում, բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում: 2018 թվականի 1-ին կիսամյակում Սևանի ԲԿ –ի վերանորոգման աշխատանքներ ընթացքի մեջ են՝ իրականացումը շարունակական բնույթ ունի , իսկ Մարտունու ԲԿ-ում նախատեսված վերանորոգման աշխատանքները և բժշկական սարքավորումներով հագեցվածությունը 2018 թվականի 1-ին կիսամյակում չի իրականացել,

քանի որ թե՛ դոնոր կազմակերպությունների կողմից և թե՛ պետ. բյուջեով դեռևս գումար չի հատկացվել :

Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի կողմից 2018թ. նախատեսված բժիշկների և բուժքույր վերապատրաստման դասընթացները 2018 թվականի 1-ին կիսամյակում չի իրականացվել, քանի որ բյուջեով դեռևս գումար չի հատկացվել:

2018 թվականի առողջապահության ոլորտի գլոբալ բյուջեն կազմում է 2.618.916.0, որը 2018 թվականի 1-ին կիսամյակում կատարվել է շուրջ 50 *%-ով*:

2018 թվականի առողջապահության ոլորտի վճարովի ծառայությունները նախատեսվել է դարձնել շուրջ՝ 316.3 մլն. դրամ՝ 175.000 շահառու, որից 2018 թվականի 1-ին կիսամյակում կատարվել է շուրջ 110.183.4 դրամի:

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են 39 բուժհաստատություններ: Մարզի բժշկական կազմակերպություններում 2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում աշխատում են՝

- բժիշկներ 346
- բուժքույրեր 921
- կրտսեր բուժաշխատող և վարչատնտեսական 300

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահության ոլորտում ոլորտում կատարված ներդրումային աշխատանքների մոնիտորինգի ցուցանիշներ

Հ/Հ	Անվանումը	Չափման միավոր	Ցուցանիշի դինամիկան	
			2018թ. պլանավորված	2018թ. 1-ին կիսամյակ փաստացի
Առողջապահություն ոլորտի ցուցանիշներ				
1	Վճարովի առողջապահական ծառայությունների գումար	**մլն.դրամ**	316.3	110.4

ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեում վճարովի ծառայությունների տեսակարար կշռի վերաբերյալ տեղեկացվում է, որ 2018 թվականին նախատեսվում է այն ավելացնել շուրջ 21%-ով, քանի որ վերակառուցվում է Սևանի ԲԿ-ը, որը համալրվելու է նոր բժշկական սարքավորումներով, վերջնական կատարողականը կներկայացվի 2018թ. տարեկան մոնիթորինգի արդյունքների ափոփման ժամանակ: Նոր բժշկական սարքավորումներով են համարլրվելու նաև մյուս առողջապահական կազմակերպությունները: Ավելի կտրուկ աճ հնարավոր չի իրականացնել, քանի որ մարզի որոշ առողջապահական հաստատություններ ունեն արդիականացման խնդիր:

6.4 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի գերակայությունները սոցիալական պաշտպանության ոլորտում 2018թ-ի 1-ին կիսամյակում իրականացված միջոցառումները.

2018թ. 1-ին կիսամյակում մարզում իրականացվել են միջոցառումներ հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման ծրագրերի իրականացման, խնամատար ընտանիքների ինստիտուտի աստիճանական ներդրման, ընտանեկան կենտրոնների ստեղծման, ծերերի խնամողների վերապատրաստման, մարզային երիտասարդական կենտրոնի զարգացման, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանման, սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների տրամադրման ուղությամբ:

Կարևորագույն հիմնախնդիրներ է համարվում նաև սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակի բարձրացումը, համագործակցությունը պետական և ոչ պետական այն կազմակերպությունների հետ, որոնք ունեն սոցիալական ուղղվածություն, մարզում արդեն աշխատած և մարզի սոցիալական վիճակը ուսումնասիրած ՀԿ-ների և ՏԻՄ–երի համագործակցությամբ 2018 թ. 1-ին կիսամյակում իրականացվել է 3 ծրագիր՝ <<Տնային խնամք ծերերին>> իրականացվել է Գավառ քաղաքում՝ <<Կարիտաս>> ՀԿ, <<Ընտանիքների հզորացման ծրագիր>> իրականացվել է Մարտունու, Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջաններում, <<Վերականգնողական ծառայություններ հաշմանդամ երեխաների համար>>: Իրականացվել է Վարդենիսի տարածաշրջանում ՝ <<Աստղավարդ>> ՀԿ:

2018 թ. 1-ին կիսամյակում ԱՍԱ վարչության կատարած աշխատանքների հաշվետվությունը տպագրել է թերթով և վերլուծվել է ''Քյավառ'' հեռուստատեսությամբ:

2018 թ. 1-ին կիսամյակում միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ընդլայնվել է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը՝ մասնավորապես բարելավել են երեխաների և ծերերի, հաշմանդամների և գործազուրկների պաշտպանվածությունը: Այս ոլորտում սոցիալական ծառայություններ մատուցողներին շարունակական աջակցության ցուցաբերման, մարզում գործող կազմակերպությունների կադրերի շարունակական վերապատրաստման՝ կարիքների գնահատման հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև մարզում գործող և սոցիալական ուղղվածություն ունեցող ու սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններին համակարգիչներով, ինտերնետային կապով ապահովան՝ ՍԱՏՏՄ /ՍԱՏԳ/, ՀԿ,ՏԻՄ, որոնք նպաստում են տեղեկատվության փոխանակման, սոցիալական ծրագրերի համակարգման, խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրագործմանը, ինչպես նաև ընթացքում, հնարավոր կդառնա ստեղծել սոցիալական ոլորտի մարզային տեղեկատվական ,,Բանկ'':

Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագրում ընդգրկված ընտանիքների թվի տեսակարար կշիռը մարզի ընտանիքների ընդհանուր թվի համեմատությանբ 01.01.2018թ. դրությամբ պլանավորվել է 17.2% , 2018թ. 1-ին կիսամյակում՝ 17.35 %:

2018 թվականին ընտանեկան նպաստ համակարգում նախատեսված բյուջեն կազմում է շուրջ 5.736.120.500 դրամ, 2018թ. 1-ին կիսամյակում հատկացվել է շուրջ 2,546,975,500 դրամ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի սոցիալական պաշտպանության ոլորտում կատարված ներդրումային աշխատանքների մոնիտորինգի ցուցանիշներ

Հ/Հ	Անվանումը	Չափման միավոր	Ցուցանիշի դինամիկան	
			2018թ. պլանավորված	2018թ. 1-ին կիսամյակ
1	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրում ընդգրկված ընտանիքների թվի տեսակարար կշիռը մարզի ընտանիքների ընդհանուր թվի մեջ	%	17,2	17.35

VII.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

7.1 ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում նախատեսված էր իրականացնել Մ4 Երևան - Սևան - Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ51+200-կմ57+00 հատվածի հիմնանորոգման 900.0 մլն.դրամ, Մ11 Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 32-րդ կիլոմետրում նստվածքային տեղամասի վերականգնման 30.0 մլն.դրամ, Հ53 Մ4-Սեմյոնովկա-Մ4 Ծովագյուղ համայնքի 300 գծամետր երկարությամբ հատվածի ասֆալտապատման 30.0 մլն.դրամ, Սեմյոնովկա համայնքում վթարված հենապատի վերականգնման 10.0 մլն. դրամ, Կարճաղբյուր համայնքի վթարային կամուրջի հիմնանորոգման 40.0 մլն. դրամ, Հայրավանքի եկեղեցի տանող ճանապարհի ասֆալտապատման 31.0 մլն.դրամ և Գանձակ-Ծաղկաշեն համայնքները իրար միացնող վթարված կամուրջի հիմնանորոգման 50.0 մլն.դրամ աշխատանքները: Վերոհիշյալ օբյեկտների հիմնանորոգման ճշգրտված նախահաշվային արժեքները կպարզվեն նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելուց հետո:

2018 թվականին պահպանման և շահագործման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է իրականացնել 481.7կմ միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային պահպանման /ասֆալտբետոնյա ծածկի փոսային նորոգում, կողնակների հարթեցում, գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների վերանորոգում, ճանապարհների ասֆալտբետոնյա ծածկի գծանշում և այլն/ 642.5 մլն.դրամ, ինչպես նաև նույն նշանակության 572.3 կմ ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքներ 228.7 մլն.դրամ:

2018 թվականին վերոհիշյալ ծրագրերի իրականացման նպատակներով ՀՀ պետական բյուջեից նախատեսվում է ներդնել 1961.3 մլն.դրամ, որի արդյունքում կստեղծվի շուրջ 420 աշխատատեղ: 2017 թվականին նմանատիպ աշխատանքներ իրականացնելու նպատակով ներդրվել է 3892.2 մլն. դրամ, ստեղծվել է շուրջ 790 աշխատատեղ:

Նշված աշխատանքների իրականացման արդյունքում շահառու կհանդիսանա մարզի ամբողջ բնակչությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների տարածքով անցնող 419.9 կմ մարզային նշանակության ավտոճանապարհներից փողոցային լուսավորությունով ապահովված են 82կմ տարբեր ճանապարհահատվածներ, որից օգտվում են ավելի քան 53000 շահառու:

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում բացի նախատեսված ծրագրերից իրականացվում են լրացուցիչ ճանապարհաշինական աշխատանքներ: Ընթացքի մեջ են Մ4 Երևան - Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ51+200-կմ57+069 հատվածի հիմնանորոգման 208.6 մլն.դրամ, նույն հատվածի

մետաղական արգելափակոցների տեղադրման 119.5 մլն. դրամ, Մ11 Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 32-րդ կիլոմետրում նստվածքային տեղամասի վերականգնման 28.0 մլն.դրամ, Հ53 Մ4-Սեմյոնովկա-Մ4 Ծովագյուղ համայնքի 300 գծամետր երկարությամբ հատվածի ասֆալտապատման 29.8 մլն.դրամ, Սեմյոնովկա համայնքում վթարված հենապատի վերականգնման 9.2 մլն. դրամ, Կարճաղբյուր համայնքի վթարային կամուրջի հիմնանորոգման 57.0 մլն. դրամ, Հայրավանքի եկեղեցի տանող ճանապարհի ասֆալտապատման 34.5 մլն.դրամ, Կարճաղբյուր համայնքի փողոցների հիմնանորոգման 218.0 մլն. դրամ, Վահան համայնքի վթարային կամուրջի վերանորոգման 7.5 մլն. դրամ, Գանձակ-Ծաղկաշեն համայնքները իրար միացնող վթարված կամուրջի հիմնանորոգման 72.7 մլն.դրամ և Լանջաղբյուրի համայնքային նշանակության 1.3կմ ճանապարհի ասֆալտապատման 90.0 մլն.դրամ աշխատանքները: Վերոհիշյալ օբյեկտների գները արտացոլում են պայմանագրային արժեքները, բացառությամբ Լանջաղբյուրի համայնքային նշանակության 1.3կմ ճանապարհի ասֆալտապատում ծրագրից, որի նպատակով հայտարարված մրցույթը չի կայացել, իսկ կայացած մրցույթների արդյունքում տնտեսված գումարը կազմում է 132.4 մլն.դրամ:

2018 թվականին պահպանման և շահագործման աշխատանքների շրջանակներում իրականացվում են 452.5կմ միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային պահպանման /ասֆալտբետոնյա ծածկի փոսային նորոգում, կողնակների հարթեցում, գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների վերանորոգում, ճանապարհների ասֆալտբետոնյա ծածկի գծանշում և այլն/ 700.2 մլն.դրամ, ինչպես նաև նույն նշանակության 546.8կմ ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքներ 268.3 մլն.դրամ պայմանագրային արժեքներով:

Նշված աշխատանքների իրականացման արդյունքում շահառու կհանդիսանա մարզի ամբողջ բնակչությունը: Վերոհիշյալ ծրագրերը ամբողջ ծավալներով և ժամկետներում իրականացվելուց հետո մարզում տրանսպորտային և ճանապարհային ցանցերի վիճակը զգալիորեն կբարելավվի:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տրանսպորտի ոլորտում կատարված ներդրումային աշխատանքների մոնիտորինգի ցուցանիշներ

Հ/Հ	Անվանումը	Չափման միավոր	Ցուցանիշի դինամիկան	
			2018թ. պլանավորված	2018թ. առաջին կիսամյակ
1	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով չսպասարկվող բնակավայրերի թիվը	հատ	12	31
2	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով համայնքի բնակավայրերից համայնքի կենտրոն անցնելու միջին արագությունը	Կմ/ժ	54	52
3	Մարզի բնակավայրերի թիվը՝ որոնք ասֆալտապատ ճանապարհով կապված չեն հիմնական մայրուղուն (չունեն բարվոք ճանապարհ դեպի շուկաներ)	հատ	28	28

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով չսպասարկվող բնակավայրերի թիվը.

Ներմարզային ուղևորափոխադրումները բարելավելու նպատակով 2018 թվականին երկրորդ կիսամյակում մարզում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից նախատեսվում է ներդնել միասնական երթուղային ցանց: Միասնական երթուղային ցանցի ներդրման դեպքում նախատեսվում է ավտոմոբիլային տրանսպորտով չսպասարկվող բնակավայրերի թիվը 31-ից նվազեցնել հասցնելով առնվազն 12-ի:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով համայնքի բնակավայրերից համայնքի կենտրոն անցնելու միջին արագությունը.
Նկատի ունենալով, որ 2018 թվականին ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են մայիս ամսից, ուստի ասֆալտապատման հետևանքով համայնքի բնակավայրերից համայնքի կենտրոն անցնելու միջին արագությունը կավելանա աշխատանքների ավարտից հետո՝ ընթացիկ տարվա երկրորդ կիսամյակում:
Մարզի բնակավայրերի թիվը՝ որոնք ասֆալտապատ ճանապարհով կապված չեն հիմնական մայրուղուն (չունեն բարվոք ճանապարհ դեպի շուկաներ)
2018 թվականին ոչ ասֆալտապատ ճանապարհով ավտոմայրուղուն կապող բնակավայրերի թվի ցուցանիշը չի պակասի, քանի որ նշված ճանապարհների հիմնանորոգում չի նախատեսվել:

7.2 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրի հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

2018թ. գործունեության ծրագրով նախատեսված է մարզում վերանորոգել խմելու ջրի և ջրահեռացման համակարգեր, որի ֆինանսավորման կարիքը կազմում է 9948.4մլն դրամ: Ծրագրերը ֆինանսավորվելու են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական, Ասիական Զարգացման, Եվրոպական ներդրումային, Գերմանական KFW բանկերի և Եվրոպական Միության միջոցներով:

Գերմանական KFW բանկի ներդրումային << Համայնքայի ենթակառուցվածքի ծրագիր (ՀԵՑ) II փուլ 3>> ծրագրի շրջանակներում ստորև ներկայացվող մարզի 6 համայնքներում նախատեսվում է իրականացնել շուրջ 9948.4 մլն. դրամի կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներ՝

Սևան քաղաքում կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման 4500 մլն., ջրահեռացման 426 մլն. և Գագարին ավանում 754.2 մլն. ՀՀ դրամի աշխատանքներ:

2018թ. նախատեսվում է իրականացնել Վարդենիս քաղաքում 1075.8մլն., Սեմյոնովկա համայնքում 289.1մլն., Ծաղկունք համայնքում 703.3մլն., Ծաղկաշեն համայնքում 416.7մլն. և Գեղհովիտ համայնքում 1783.3մլն. ՀՀ դրամի ջրամատակարարման աշխատանքներ:

2018թ-ի առաջին կիսամյակում համայնքային ենթակառուցվածքի ծրագիր (ՀԵՑ) II փուլ 3, լոտ 3 ծրագրով կատարվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: Նախատեսվում է մրցույթը իրականացնել 2018թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:
Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի միջոցներով մարզի Արծվանիստ համայնքում կառուցվող 95.0մլն.ՀՀ դրամ արժողությամբ ջրագծի 59.0մլն. դրամի աշխատանքներն իրականացվել են 2017 թվականին, 2018թ. առաջին կիսամյակում իրականացվել է 33.0 մլն ՀՀ դրամի աշխատանքներ, մնացած 3.0մլն.դրամի աշխատանքները կիրականացվեն 2018թ-ի երկրորդ կիսամյակում: ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության 100%-ը ապահովված են խմելու ջրով և շահառու են: Մարզի բնակչությունը ունի 4-24 ժամյա ամենօրյա ջրամատակարարում;

7.3 ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

2018 թվականին գազամատակարարման համակարգի բաժանորդների թիվը կաճի 1.2%-ով՝ գազ կսպառի մարզի ևս 3014 բնակիչ: Այսօր բնական գազ է մատակարարվում մարզի 61 համայնքներին, որը կազմում է մարզի գազիֆիկացված բնակավայրերի 67%-ը՝ գազ է սպառում շուրջ 210954 շահառու: 2018թ-ին <<Գազպրոմ-Արմենիա>> ՓԲԸ–ի կողմից նախատեսված է իրականացնել

գազամատակարարման գծերի վերատեղադրման և ընթացիկ վերանորոգման 633.0մլն ՀՀ դրամի աշխատանքներ: Գազիֆիկացված տնային տնտեսությունների թիվը պետք է հասցվի 45500-ի:

<<Գազպրոմ-Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից առաջիկա տարիներին ներդրումային ծրագրերով մարզում գազիֆիկացման աշխատանքներ չեն նախատեսվում: Ընկերության կողմից ներդրումները հիմնականում կուղղվեն Սևանա լճի բարձրացման հետ կապված, ինչպես նաև գազաբաշխման համակարգի վթարային գազատարների փոխարինման և վերատեղադրման աշխատանքներին:

<<Գազպրոմ-Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից 2018թվականի 1-ին կիսամյակում իրականացվել են բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի, ինչպես նաև ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափյուրների ձեռք բերման և տեղադրման 14,7 մլն. ՀՀ դրամ արժողությամբ աշխատանքներ:

7.4 ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Էներգետիկայի ոլորտի նպատակները

Տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացումը նոր պահանջներ է առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար: Ներկայումս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն, 2016թ. դրությամբ, մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 13 փոքր հիդրոէլեկտրակայաններ, տարեկան մոտ 56.8 մլն կՎտ/ժ, 29820 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 2.4 մլն. կՎտ/ժ-ով, ինչը՝ իր հերթին, կհանգեցնի արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին և տասնյակ աշխատատեղերի ստեղծմանը: Ներդրումների ընդհանուր ծավալը 935.6 մլն, դրամ է, սակայն ելնելով Սևանա լճի էկոհամակարգի և էնդեմիկ ձկնատեսակների պահպանության խնդիրներից ՀՀ կառավարության 04.08.2011թ. N30 որոշմամբ փոքր ՀԷԿ-երի զարգացման սխեմայի ցանկից հանվել է Սևանա լճի ավազան բաժինը, նպատակ ունենալով դադարեցնել Սևանա լճի ավազանում փոքր ՀԷԿ-երի կառուցումը:

2018 թվականին «Իրան-Հայաստան 400 կՎ 3-րդ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում» ծրագրի համար նախատեսված է 4,5 մլրդ ՀՀ դրամ:

2018թ. 1-ին կիսամյակում <<ՄԵԿ>> ՓԲԸ-ի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան ՀԷԿ-ում իրականացվել են Սևան 110ԿՎ ՕԳ-ի հիմնական և պահուստային պաշտպանությունների վահանակի փոխարինում շուրջ 32.2 մլն ՀՀ դրամ ի աշխատանքներ:

Մարզում չգազիֆիկացված Գեղամասար և Փամբակ համայնքներում 2018թ. 1-ին կիսամյակում իրականացվել են էներգաարդյունավետության համապատասխանաբար 5.34ԿՎՏ դրվածքային հզորություն 2.2 մլն ՀՀ դրամ արժողության (2հատ) և 2.12 ԿՎՏ դրվածքային հզորության 1.1 մլն ՀՀ դրամ արժողության (1հատ) արևային ֆոտովոլտային համակարգեր:

23.3 մլն ՀՀ դրամ արժողության թվով 51 արևային ջրատաքացման համակարգեր են տեղակայվել մարզի Գեղամասար, Նորակերտ, Արփունք, Ջիլ, Կալավան, Փամբակ համայնքներում

Հիմնադրամի և <<ԱԳԲԱ_ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ առևտրային բանկի կողմից համատեղ մարզի Գանձակ համայնքում 2018թ. 1-ին կիսամյակում իրականացվել և ավարտվել են 60 հատ արտաքին լուսավորության տեղակայման շուրջ 4.8 մլն. ՀՀ դրամի աշխատանքներ, 4,5 մլն ՀՀ դրամ արժողության ֆոտովոլտային համակարգերի տեղակայման, ինչպես նաև 474,0 հազ ՀՀ դրամ արժողության արևային ջրատաքացուցիչներ:

<<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ գործարար ծրագրի շրջանակներում 2018թ. 1-ին կիսամյակում իրականացվել է մարզի 110ԿՎ ՕԳ <<Սևան>> հենասյուն 2, 3, 82, 84, 85 բացակայող կամ քայքայված հողանցման կոնտուրների տեղադրման աշխատանքներ, որը կազմում է 1,097 մլն. ՀՀ դրամ:

2018 թվականին Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՀԲ) աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրով նախատեսված է 1,8 մլն. ՀՀ դրամ:

Էներգետիկայի ոլորտում մասնավորի կողմից ներդրումների ընդհանուր գումարը կազմելու է 4.5 մլրդ. ՀՀ դրամ և պետբյուջեից կներդրվի 833,3 մլն. դրամ ընդհանուր առմամբ մարզում կստեղծվեն՝ կառուցման փուլում շուրջ 75, շահագործման փուլում՝ շուրջ 85 աշխատատեղեր, ընդամենը կստեղծվի 160 աշխատատեղ:

2018 թվականի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտով նախատեսված է 833,3 մլն. ՀՀ դրամի աշխատանքներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության 100%-ը ապահովված է շուրջօրյա էներգամատակարարմամբ:

VIII. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության ոլորտի մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

2018թ. գործունեության ծրագրով շարունակվում են դպրոցների, մշակույթի տների, մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքները:

2018 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի միջոցներով հիմնանորոգման փուլում են թվով 3 կրթական օբյեկտներ, որոնցից մեկ օբյեկտում կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 14.7 մլն դրամ:

Սևան քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների դիմաց վճարվել է 26.4 մլն դրամ:

Ասիական զարգացման բանկի միջոցներով կառուցվող Գավառ քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի շինարարական աշխատանքների դիմաց վճարվել է՝ 88.7 մլն դրամ:

Հայաստանի տնտեսական զարգացման հիմնադրամի կողմից հիմնանորոգման փուլում գտնվող թվով 4 մանկապարտեզնեում կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 133.7 մլն.դրամ:

Աշխատանքներ են տարվում սեյսմիկ ռիսկի գնահատման, քարտեզների կազմման և ռիսկերի նվազեցման միջոցառումների ուղղությամբ:

2018թ.առաջին կիսամյակում քաղաքաշինության բնագավառում կատարվել է 263.5 մլն դրամ ներդրումներ, որի արդյունքում ստեղծվել է 160 աշխատատեղ:

IX.ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

9.1 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարզի երրորդ ռազմավարական նպատակն է՝ մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացումը և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավումը: ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և մարզի համայնքապետարանների աշխատակազմերի պարտադիր վերապատրաստումները դարձել են կարողությունների զարգացման շարունակական գործընթացներ:

2018 թվականին նախատեսվել էր մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում թվով 37 մարդ, իսկ 2018թ. 1-ին կիսամյակում վերապատրաստված մարզպետարանի աշխատակիցների թիվը կազմում է թվով 41 մարդ:

2018թ. նախատեսվել է 75 համայնքային ծառայողների վերապատրաստում, սակայն 1-ին կիսամյակում՝ վերապատրաստում չի իրականացվել:

Մարզպետարանի աջակցությամբ կամ ուղղակի գործողություններով մարզում կատարված ներդրումների ծավալի ավելացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառում, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգումը և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային

տարածքներ օգտագործելու համար սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպումը շուրջ 28 համայնքներում:

2018թ. աղբավայրերի շահագործման և փակման ենթակա 9 աղբավայրերից, 2018թ. 1-ին կիսամյակում փակվել են 9 աղբավայր:

2018թ. տարածքային կառավարման ոլորտի առաջնահերթություններ են.

-Տարածքային կառավարման նոր օրենսդրության մշակմանը ակտիվ մասնակցությունը,

-Մարզային և տեղական դերակատարների կարողությունների հզորացման նպատակով կազմակերպված 42 վերապատրաստումների դասընթացներից՝ 2018թ. 1-ին կիսամյակում կազմակերպվել է 10 վերապատրաստումների դասընթացներ:

- Հանրապետական միջոցառումներին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովումը շուրջ 7 միջոցառում, սակայն 2018թ. 1-ին կիսամյակում կազմակերպվել է 3 միջոցառում:

2018 թվականի ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերը կազմում է 687,6 մլն. ՀՀ դրամ, իսկ 2018թ. 1-ին կիսամյակում կազմել է 274,2 մլն. ՀՀ դրամ:

9.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Տարածքային զարգացման անհամաչափություններից ելնելով մարզի տեղական ինքնակառավարման համակարգում մեծ թվով փոքր և թույլ կարողություններ ունեցող համայնքները խոշորացվել են: Խոշորացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների համայնքները՝ Ճամբարակ, Այգուտ, Անտառամեջ, Արծվաշեն, Գետիկ, Դպրաբակ, Թթուջուր,Կալավան, Ձորավանք, Մարտունի, Վահան (թվով 11):Վարդենիս, Այրք, Ներքին Շորժա, Վերին Շորժա (թվով 4):Գեղամասար, Սոթք, Ազատ, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Դարանակ,Կախակն, Կութ, Կուտական, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ (թվով 18: Շողակաթ, Արտանիշ, Աղբերք, Դրախտիկ, Ծափաթաղ, Ջիլ (թվով 6):

2018թ. տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններ են.

-Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը՝ 53 համայնքներում դասընթացների կազմակերպում՝ 4, նոր տեխնոլոգիաների ներդրում, քաղաքացիներին մեկ պատուհանի ծառայությունների մատուցման ներդրում:

-Նոր ձևավորված համայնքների աշխատակազմերի կարողությունների հզորացումը՝ 75 համայնքային ծառայողներ:

2018թ 1-ին կիսամյակում համայնքային ծառայողների վերապատրաստում չի իրականացվել, այն նախատեսվում է իրականացնել 2-րդ կիսամյակում:

-Նոր ձևավորված համայնքների զարգացման ծրագրերի մշակումը՝ նախատեսվում շուրջ 20 խոշորացված համայնքներում: 35 համայնքները խոշարացվել են և դարձել են 4 խոշորացված համայնքներ: Երկրում նոր քաղաքական զարգարգացումների հետ կապված համայնքների խոշարացումը այս պահին դադարեցղված է: Խոշորացված 4 համայնքները ներկայացրել են հնգամյա զարգացման ծրագրեր:

2018թ. 1-ին եռամսյակում Եվրոմիության աջակցությամբ մարզի խոշորացված Վարդենիս և Ճամբարակ համայնքների ճանապարհների անցանելիության ապահովման և տուրիզմի զարգացման նպատակով ձեռք են բերվել համապատասխան տեխնիկաներ և մեքենամեխանիզմներ: Ծրագրի գործունեությունը ընթացքի մեջ է:

2018 թվականին նախատեսվում է Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների զգալի աճ:

2018թ. Նախատեսված էր ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների կողմից ներկայացված բյուջեների նախագծերի համաձայն սեփական եկամուտները կազմելու է 1.777.560,8 հազ. ՀՀ դրամ: Աճը բացարձակ թվով կազմելու է 427800,8 հազ. ՀՀ դրամ, տոկոսային արտահայտությամբ մոտ 31%, ուստի մեկ շնչին ընկնող եկամուտների աճը նույնպես կլինի անհամեմատ բարձր:
2018թ.ընթացքում սեփական եկամուտները կազմելու են 1906033,7 հազ. ՀՀ դրամ: Աճը կազմելու է 412811,9 հազ. ՀՀ դրամ, տոկոսային արտահայտությամբ 27,6%,, իսկ 2018թ. 1-ին կիսամյակում սեփական եկամուտները պլանային թիվը կազնել է 953016,8 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 637805,9 հազ. ՀՀ դրամ, որը կազմում է 66,9%:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ֆինանսական ցուցանիշներ

Հ/Հ	Անվանումը	Չափման միավոր	Ցուցանիշի դինամիկան	
			2018թ. պլանավորված	2018թ. 1-ին կիսամյակ
1	Համայնքների սեփական եկամուտներ ը (գույքահարկ, հողի հարկ, տեղական տուրքեր, պետական տուրքեր, գույքի վարձակալությունից եկամուտներ, աղբահանության վճար) մեկ շնչի հաշվով	հազ. դրամ	8	7,5
2	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ	տոկոս	29.5	30,2

ՀՀ Գեղարքունիքի մարզում մեկ շնչին ընկնող համայնքների սեփական եկամուտը 2018 թվականին նախատեսվել է 7722 դրամ, իսկմ 2018 թվականի 1-ին կիսամյակում կազմում է 7516,2 դրամ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքային ծառայություններ աղբահանություն և սանիտարական մաքրում

h/h	Անվանում	Չափման միավոր	Չափման դինամիկան	
			2018թ. պլանավորված	2018թ. 1-ին կիսամյակ
	Համայնքային ծառայություններ աղբահանություն և սանիտարական մաքրում			
1	Փակված (կամ փակվելու ենթակա) աղբավայրերի թիվը	հատ	9	9
2	Շահագործվող աղբավայրերի թիվը	հատ	29	29
	Աղբահանություն իրականացնող բնակավայրերի քանակ	հատ	57	46
4	Ֆիզակական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները	մլն,դրամ	220.7	30,9
5	Իրավաբանական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները	մլն,դրամ	53,9	14,0

1.Համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ինքնածախսածածկման եղանակով կատարելու համար անհրաժեշտ է 332.0 մլն.դրամ: 2018 թվականին այդ նպատակի համար համայնքային բյուջեներում նախատեսված է հավաքագրել 126,824 մլն.դրամ, սակայն համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ինքնածախսածածկման նպատակով 2018 թվականի 1-ին կիսամյակում համայնքային բյուջեներում հավաքագրել է 44930,7 մլն. դրամ:
Նշված աշխատանքների կատարմանը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ավելացնել տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված աղբահանության պայմանագրերի քանակը հասցնելով 90%, հաճախակի կազմակերպել սանմաքրման աշխատանքներ և շաբաթօրյակներ, ներգրավելով համայնքային ռեսուրսները, բարձրացնել իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետությունը:

1. Մարզում չօգտագործվող պետական, համայնքային և մասնավոր գույքի նպատակային օգտագործման ապահովող ծրագրերի իրականացման համար մարզում իրականացվող խոշորացման գործընթացին զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել գույքագրման աշխատանքներ, ապահովել պետություն-համայնք-մասնավոր հատվածի համագործակցություն, շուրջ 28 համայնքներում բացելով նոր աշխատատեղեր /հատկապես սահմանամերձ համայնքներում, որտեղ բիզնեսն ունի հարկային առավելություն/.

2018թ. 1-ին կիսամյակում ստեղծվել է 9 աշխատատեղ /անասնաբույժ/:

3. 2018թ. կշարունակվի համայնքների տեղեկատվական բազաների շահագործման ծրագիրը, ինչպես նաև գյուղատնտեսության, տեղական ինքնակառավարման և քաղաքաշինության համապարփակ տվյալների հաշվառման, թերությունների վերացման և համայնքներում հաշվառման նոր համակարգերի ներդրման աշխատանքները /միասնական 1 բազա/:

9.3 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն առավել թափանցիկ դարձնելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և մարզի քաղաքացիական հասարակության համատեղ ուժերով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1.Մարզային և հանրապետական ԶԼՄ-ների, մարզի տարածքում առավել ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների հետ 2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ծավալվել է անհրաժեշտ համագործակցության և պատրաստվել տեղեկատվական բնույթի նյութեր/ 230թողարկում/:

2.Մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով 2018թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է հանրային կարևոր նշանակություն ունեցող հարցերի շուրջ հարցազրույցներ, ուղիղ եթերներ, կլոր սեղաններ: Նույն միջոցներով լուսաբանվել են մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների՝ համայնքներ կատարվող աշխատանքային այցերը /50 թողարկում/:

3.Հանրության շրջանում 2018 թվականի 1-ին կիսամյակում աշխատանքներ են տարվել ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության, թափանցիկության, հաշվետվողականության ապահովման ուղղությամբ, օգտագործվելով տեխնիկական ժամանակակից մեթոդներն և հնարավորությունները /2 ուղիղ եթեր/:

4.Մարզպետարանի պաշտոնական կայքէջում 2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ապահովվել է առկա տեղեկատվության մատչելիությունը, հանրային հետաքրքրություններ ունեցող տեղեկությունների հրապարակումը, տպագիր մամուլի միջոցով մարզի բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացումը /50 տեղեկատվական բնույթի նյութեր/:

9.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է մշտապես գտնվի պատասխանատու մարմինների ուշադրության կենտրոնում: Ռիսկերի նվազեցման գործընթացում գլխավոր պայմանը հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին: Այս գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպումը:

2018թ. 1-ին կիսամյակում տարբեր ոլորտների **30** մասնագետներ վերապատրաստվել են ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ակադեմիայում:

Քաղաքացիական պաշտպանության իրականացման նպատակով կարևորվում են հետևյալ միջոցառումները.

1.Բջջային կենտրոնացված ազդարարման համակարգի ներդրում, էլեկտրական շչակներով բոլոր 91 բնակավայրերում 76 շչակներով համալրում,

2.Պարզագույն թաքստոցների կառուցում Վահան համայնքում՝ 1 հատ,

3.Գործող թաքստոցների կապիտալ նորոգում: Առկա են 62 թաքստոցներ, որոնք հիմնականում վերանորոգման կարիք ունեն:

Ոլորտի հիմնախնդիրներից է սողանքների և քարաթափերի կանխարգելումը, որտեղ կարևորվում են հետևյալ միջոցառումները.

1) անվտանգության ապահովմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների կազմակերպում մարզի 20 բնակավայրերում,

2) 17 համայնքում կատարվել են քարաթափման ռիսկերի գնահատում:2018թ.նախատեսվում է մաքրել քարաթափման 5 տեղամաս:

2018թ. 1-ին կիսամյակում 17 բնակավայրերում առկա 24 հնարավոր քարաթափման տեղամասերում ու կանխարգելման և հնարավոր հետևանքների նվազեցման նպատակով կատարվել են ուսումնասիրություններ:

3)Ճամբարակ, Մարտունի,Գետիկ բնակավայրերում առկա են սողանքային վտանգավոր գոտիներ, որոնց վտանգների կանխարգելումը հնարավոր է անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների առկայության դեպքում:

Մյուս հիմնախնդիրը գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելումն է, որի նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն գետերի հուների, հեղեղատարների մաքրման և ափապաշտպան կառույցների վերանորոգման աշխատանքներ:

2018թ. 1-ին կիսամյակում մարզի 31 բնակավայրերում իրականացվել են հեղեղավտանգ և սելավավտանգ տեղամասերի և 9 վթարային կամուրջների ուսումնասիրություն: Իրականացվում է Գանձակ, Ծաղկաշեն միջահամյնքային կամուրջի հիմանորոգման աշխատանքներ: Ք. Գավառ Դեմիրճյան փողոցում մաքրվել է 650մ սելավատար:

1.Գեղարքունիքի մարզի <<Խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի անցման>>,<<Զորահավաքային>> պլանների փոփոխություններ՝համապատասխանեցնելով ՀՀ նոր Սահմանադրության նորմերին և դրանց արդյունքում մարզպետարանի պաշտոնյաների անհատական պլանների փոփոխություն: 2018թ, առաջին կիսամյակում պլաններում կատարվել են փոփոխություններ,ուղարկվել են ՀՀ կառավարություն:

2.Շտաբային մարզումների անցկացում առնվազն երեք անգամ,այդ թվում ցուցադրական մարզումներ՝ներգրավելով ՀՀ բոլոր նախարարությունների, գերատեսչությունների և մարզպետարանների ներկայացուցիչներին: 2018թ, առաջին կիսամյակում իրականացվել է 2 մարզում,որոնցից 1-ը՝ ցուցադրական,2018թ. մարտի 30-ին և մայիսի 23-24-ին: Հաջորդը 2018թ. օգոստոսի 24 –ին է:

3.2018թ.ընթացքում մարզում համայնքների խոշորացման գործընթացի ավարտից հետո բոլոր համայնքների աշխատակազմերում ստեղծել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի բնագավառը համակարգող աշխատակցի առնվազն մեկ հաստիք,ինչը ավելի կայուն հիմքերի վրա կդնի տվյալ համայնքում զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ

կապված աշխատանքները և մարզային ու համայնքային զորահավաքային մարմինների համատեղ աշխատանքը:- 2018թ, առաջին կիսամյակում խոշորացված համայնքներում չի ստեղծվել,համայնքների խոշորացումը չի ավարտվել:

4.Զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների,խոշորացված և 5000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների զորահավաքային ու խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի անցման պլանների մշակում: - 2018թ, առաջին կիսամյակում 6 համայնքներում իրականացվել են խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի անցման պլանների մշակման աշխատանքները,գտնվում են հաստատման փուլում:

X. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարզի 2018 թվականի գործունեության ծրագիրը ենթարկվել է 1-ին կիսամյակի մոնիտորինգի ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և մարզի ռազմավարական նպատակներին հասնելու առումով: Մշտադիտարկման համակարգը վերահսկում է ծրագրի կատարումը և ամփոփում է 2018 թվականի գործունեության արդյունքները: 2018 թվականի 1-ին կիսամյակի գործունեության ծրագրի մշտադիտարկման համակարգը ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր է գնահատել մարզային մակարդակով:

2017-2025թթ. ՄԶՌ ռազմավարական նպատակներից բխում է ՀՀ Գեղարքունիքի մարզի 2018թ. թվականի տարեկան աշխատանքային պլանի հիմնական կատարողական ցուցանիշները՝ ստորև, որոնք համեմատվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարական ցուցանիշների հետ:

2018թ. հիմնական կատարողական ցուցանիշներ	**ՄԶՌ հիմնական կատարողական ցուցանիշներ**
▪ *2018 թվականին մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասցնել 50%-ի հանրապետական միջինի նկատմամբ,* ▪ *2018 թվականին ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի ավելացում՝ 687:* ▪ *2018 թվականին նոր կազմակերպությունների թվի ավելացում՝ մինչև 23:*	▪ *2025 թվականին մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը հասցնել 70%-ի հանրապետական միջինի նկատմամբ,* ▪ *2025 թվականին ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի ավելացում՝ մինչև 10%-ով,* ▪ *2025 թվականին նոր կազմակերպությունների թվի ավելացում՝ մինչև 10%-ով:*
▪ *2018 թվականին թույլ զարգացած համայնքների գործազրկության մակարդակի նվազեցում՝ 0.1%-ով,* ▪ *2018 թվականին թույլ զարգացած համայնքներում ՓՄՁ-ների աճ՝ 25,* ▪ *2018 թվականին մարզի տարածաշրջաններում արևային համակարգերի ներդրում՝ 3 կայան:*	▪ *2025 թվականին թույլ զարգացած համայնքների գործազրկության մակարդակի նվազեցում10%-ով,* ▪ *2025 թվականին թույլ զարգացած համայնքներում ՓՄՁ-ների աճ՝ 10%-ով,* ▪ *2025 թվականին մարզի տարածաշրջաններում արևային համակարգերի ներդրում:*
▪ *2018 թվականին մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ սուբյեկտների թվի 112:*	▪ *Մինչև 2025 թվականը մարզային և տեղական մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ սուբյեկտների թվի 30%-ի չափով՝ յուրաքանչյուր տարի:*

Մշտադիտարկման 2018 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը ամփոփել է նախատեսված բոլոր միջոցառումների արդյունքները՝

1.Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված 1-ին կիսամյակի միջոցառումները, կատարված ծախսերը և արդյունքները.
2.Ներկայացված են տարվա հիմնախնդիրները,այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը.
Կատարողական ցուցիչները 1-ին կիսամյակի հաղորդվելու և գնահատվելու են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից, արդյունքները ներկայացվելու են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մոնիտորինգի ցուցանիշներ

#	Անվանումը	Չափման միավորը	ՀՀ Գեղարքունիքի մարզ	
			2018 թ. Պլանավորվա	2018 թ.1-ին կիսամայակ
	Մարզի տնտեսական ցուցանիշներ			
1	Մարզի վարչական տարածքում կատարված ներդրումների ծավալը	մլն. դրամ	34 730,2	3 540,7
		մեկ շնչի հաշվով հազ. դրամ	150,5	15,4
	այդ թվում՝ մասնավոր հատվածում կատարվող ներդրումներ	մլն. դրամ	32 818,70	3 277,2
2	Տարվա ընթացքում ստեղծված ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի թիվը (առանց սեզոնային աշխատատեղերի)	մարդ	687	130
	1000 բնակչին ընկնող աշխատատեղերի թիվը		3,0	0.6
	Համայնքների ֆինանսական ցուցանիշներ			
1	Համայնքների սեփական եկամուտները (գույքահարկ, հողի հարկ, տեղական տուրքեր, պետական տուրքեր, գույքի վարձակալությունից եկամուտներ, աղբահանության վճար) մեկ շնչի հաշվով	հազ. դրամ	8	3.83
2	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ	%	29,5	22,5
	Համայնքային ծառայություններ աղբահանություն և սանիտարական մաքրում			
1	Փակված (կամ փակվելու ենթակա) աղբավայրերի թիվը	հատ	9	9
2	Շահագործվող աղբավայրերի թիվը	հատ	29	29
	Աղբահանություն իրականացնող բնակավայրերի քանակ	հատ	57	46
4	Ֆիզկական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները	մլն,դրամ	220.7	35.9
5	Իրավաբանական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները	մլն,դրամ	53,9	17.4
	Գյուղատնտեսություն			
1	Գյուղատնտեսության մեջ նոր կամ շարունակական ներդրումներ	մլն դրամ	2041,1	893.6

2	Գյուղատնտեսական նոր աշխատատեղեր	մարդ	76	19
3	Ժամանակակից տեխնոլոգիայով ինտենսիվ այգիների տարածքը	հա	0	0
4	Հակակարկտային ցանցերով ցանցապատված այգիների տարածքը	հա	0	0
5	Մարզում սպանդանոցային կառույցներ թիվը	հատ	4	0
6	Սպանդանոցների հզորությունը	տոննա/տարի	5000	0
7	Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրված տեխնիկայի թիվը	հատ	18	20
8	Տոհմային անասնաբուծական տնտեսությունների քանակ	հատ	0	0
9	Տոհմային տնտեսություններում անասնագլխաքանակը		0	0
10	Սառնարանային տնտեսությունների քանակ		4	0
11	Սառնարանային տնտեսությունների հզորություն	տոննա	44	0
12	Գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգելի մակերես	հա	14507	14507
13	Փոքր տնտեսությունների թիվը (1-5 հա պտղատու այգի կամ խաղող, կամ 5-10 հա վարելահող, կամ 0.1-0.5 հա ջերմոց, կամ 20-30 գլուխ խ. Եղջ. Գյուղ. Կենդանի, կամ 50-100 գլուխ մանր եղ. Գյուղ. Կենդանի)	հատ	845	3
14	Միջին տնտեսությունների թիվը (5-10 հա պտղատու այգի կամ խաղող, կամ 10-20 հա վարելահող, կամ 0.5-2.0 հա ջերմոց, կամ 30-60 գլուխ խ. Եղջ. Գյուղ. Կենդանի, կամ 100-150 գլուխ մանր եղ. Գյուղ. Կենդանի)	հատ	343	3
15	Խոշոր տնտեսությունների թիվը (10-ից ավելի հա պտղատու այգի կամ խաղող, կամ 20-ից ավելի հա վարելահող, կամ 2-ից ավելի հա ջերմոց, կամ 60-ից ավելի գլուխ խ. Եղջ. Գյուղ. Կենդանի, 150-ից ավելի գլուխ մանր եղ. Գյուղ. Կենդանի)	հատ	256	2
	Կրթություն			
1	Դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը		9	9.2
2	Միջազգային/հանրապետական օլիմպիադաների մրցանակակիրներ	մարդ	25	22
3	Ուսումը միջազգային կամ ՀՀ պետական ԲՈՒՀ-երում շարունակողներ	մարդ	380	20
	Տրանսպորտ			

1	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով չսպասարկվող բնակավայրերի թիվը	հատ	12	31
2	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով համայնքի բնակավայրերից համայնքի կենտրոն անցնելու միջին արագությունը	(կմ/ժամ)	54	54
4	Մարզի բնակավայրերի թիվը՝ որոնք ասֆալտապատ ճանապարհով կապված չեն հիմնական մայրուղուն (չունեն բարվոք ճանապարհ դեպի շուկաներ)	հատ	28	28
	Առողջապահական ոլորտի ցուցանիշներ			
1	Վճարովի առողջապահական ծառայությունների գումար	մլն. դրամ	316,3	110.4

XI. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2018Թ. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2018 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի բոլոր ոլորտների պահանջվող ֆինանսավորումը կազմում է 54 մլրդ 670 մլն. 959 հազար. դրամ , իսկ 2018 թվականի 1-ին կիսամյակում իրականավել է 12 մլրդ. 524 մլն. 559 հազ. 100 դրամի ներդրումներ:

ԸՆԴԱՄԵՆԸ 2018թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ	**54 670 959,0**	**12 524 559,1**
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	**19 212 382,4**	**8 508 876,5**
սեփական միջոցներ	**19 212 382,4**	**8 508 876,5**
վարկային միջոցներ	**0,0**	**0.0**
միջազգային կազմակերպություններ և դոնորներ	**1 732 120,0**	**774 555.5**
համայնքային բյուջե	**839 533,2**	**307 227.1**
մասնավոր ներդրողներ	**32 886 923,4**	**2 933 900.0**
այլ աղբյուրներով	**0,0**	**0.0**

XII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1 - *ՀՀ Գեղարքունիքի մարզի 2018 թվականի գործունեության ծրագրի տրամաբանական հենք*

Հավելված 2 -*ՀՀ Գեղարքունիքի մարզի 2018 թվականի գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը՝ ըստ ոլորտների*

Հավելված 3 -*ՀՀ Գեղարքունիքի մարզի 2018 թվականի գործունեության ծրագրով նախատեսված բոլոր ոլորտների ամփոփ ֆինանսավորումը*